ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 75 - Ա **12 մայիսի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6 - Ի N 8 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.22-րդ կետերի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի մարտի 6-ի <<Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մայիսի 17-ի N 38 – Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 8–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

<<1. Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր նշանակել՝

Հովհաննիսյան Դերենիկ – ինժեներական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Համբարձումյան Համբարձում - բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մուշեղյան Յուրա - նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Պողոսյան Անուշ - բժշկական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Սարգսյան Նելսոն – սննդի և առևտրի ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

Ադամյան Արսեն - հասարակական կարգի պահպանության ծառայության պետ, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/

Խաչատրյան Գևորգ - տրանսպորտային ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժն վարիչ

Բիձյան Հակոբջան - կոմունալ տեխնիկական և բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների բաժնի վարիչ

Հայրապետյան Արազ - կապի և ազդարարման ծառայության պետ, <<Արմենթել>> ՓԲԸ արևելյան տարածքային կենտրոնի Գեղարքունիք ուղղության փորձագետ /համաձայնությամբ/

Գամբուրյան Սարգիս - էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության պետ, <<Հայ ԷՑ>> փակ բաժնետիրական ընկերության <<Գեղամա>> մասնաճյուղի տնօրենի տեղակալ իրացման գծով /համաձայնությամբ/>>:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ